ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ.ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

ՈՒՐԲԱԹ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ.
№ 26 (516)
www.syuniacyerkir.am

Եւ մի՛ փար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից...

Տէրունական աղօթքից



Մեղեդի ծննդյան

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
ինչպես երկու փայլակնաձեւ արեգակներ,
Շողն է նման լուսացնցուղ այգաբացի:

Թափվում էին այդերից՝ վառ
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.
Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում
Հուզավարար կենսապու սեր:

Կամար կապած թեւերը գիրգ
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելեւէջներն հյուսում իրար.
Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:
Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.

Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահոդդ.
Շողում էին նույն կենսավառ
Սիրով ջնաղ ու գիներոյր.
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:

Այդ վարսերը համերամ զա՛ղդ, համորեն զա՛ղդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են այդերի շուրջ.
Լուսափայլ է ծոցը, կարմիր վարդով լցված.
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:

Բուրում էր նա կնդրուկի պես
Ասպվածային հրով լցված մի բուրվառի.
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվագ:

Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում.
Գոտին կամար, արծաթափայլ.
Ոսկեթելն ու նրբակերտ՝
Դաճուճված էր ակնեղենով շափյուղայի:

Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտերից:
Քեզ պսակող թագավորին
Ու նորածին այն փրկչին փա՛ռք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

Գրիգոր Նարեկացի
951-1003

Սյունիքում մեկնարկեց ձմեռային զորակոչը

Հարութ Ավագյանը Շինուհայր բնակավայրից է: Ճտպտան տղա է երեւում. ուրախ-ուրախ շփվում է ծնողների, հարազատների, ընկերների հետ. զգում ես, որ այդ ուրախությունը շինծու չէ:

– **Բանակ ես գնո՞ւմ,** – **հարցնում եմ Հարութին:**

– *Իհարկե, տղա եմ, պիտի գնամ, ծառայեմ հայրենիքիս:*

– **Ծնողներդ չե՞ն կարող քեզ ազատել ծառայությունից,** – փորձում եմ խաղալ նրա հոգու հետ:

– *Ինչո՞ւ,* – զարմանում է Հարութը, – *բա որ ես չգնամ բանակ, էն մեկը չգնա, էն մյուսը չգնա, բա մեր աղունն ով պիտի աղա: Ճիշտ չէ՞, տղաներ,* – դառնալով նորակոչիկներին՝ ասում է Հարութը:

Բանակ մեկնողները դրական շարժում են իրենց գլուխը:

Գորիսի զինկոմիսարիատի բակում հնչում է հայկական զուռնա-դհոլի ձայնը: Առանց հրավերի, առանց հուշելու, հոգու մղումով մեկեն սկսում են պարել տղաները: Պար չէ դա սովորական, եւ պարն այդ ասես խորհրդանշում է տղաների անձնուրացությունը, պատրաստակամությունը:

Դեկտեմբերի 17-ին Սյունիքի մարզում մեկնարկեց ձմեռային զորակոչը, եւ սա առաջին հավաքն է: Ըստ զինկոմի՝ այդ օրվա հավաքի մասնակիցները կամավորներ են, կամավորներ այն առումով, որ ցանկացել են ձմեռային զորակոչի ժամանակ առաջինը գնալ զինվորական ծառայության:

Ամբիոնին է մոտենում Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը: Նա հայ ժողովրդին շնորհավորում է ձմեռային զորակոչի առթիվ, տղաներին մաղթում խաղաղ ու անփորձանք ծառայություն:

– *Դուք պետք է խելոք ծառայեք, օրինակելի զինվոր լինեք, գերազանց տիրապետեք ռազմական տեխնիկային: Մեր թշնամին թվով մեծ բանակ ունի: Մենք նրան պիտի հաղթենք մեր գիտելիքներով, ռազմական տեխնիկայի գերազանց տիրապետմամբ: Դուք գնում եք պաշտպանելու-ամրապնդելու ձեր պապերի, հայրերի անձնազոհության գնով ձեռք բերածը: Եղեք նրանց արժանի հետնորդները: Բարի ճանապարհ, բարի վերադարձ ձեզ...*

Տղաներին հայոց բանակ է ճանապարհում նաեւ ազատամարտիկ, գնդապետ, նախկին զինկոմ, Սյունիքի երկրապահ կամավորականների միության նախագահ Մելիքսեթ Պողոսյանը:

– *Սյունեցին միշտ փայլել է իր խիզախությամբ, մարտունակությամբ, համոզված եմ, որ դուք նույնպես Սյունիքի անունը բարձր եք պահելու եւ բոլորս հպարտանալու ենք ձեզնով: Միշտ հիշեք, առանց բանակի չկա պետություն, բանակն է որոշում երկրի ճակատագիրը: Դրա համար մենք պետք է անընդհատ բարձրացնենք մեր բանակի մարտունակությունը, որ մեր թշնամուն խաղաղություն պարտադրենք: Ու հիշեք նաեւ, մենք սպասում ենք ձեզ, ձեզանից լավ լուրերի ենք սպասելու:*

Հայոց բանակ մեկնողներին բարի ճանապարհի ու վերադարձի խոսքեր է ասում նաեւ վետերանների Գորիսի տարածքային խորհրդի նախագահ Խասան Հարությունյանը՝ նշելով, որ անկախության այս սերունդը պատվով կկատարի իր առաքելությունը եւ տուն դառնալով եւս մեկ առաքելություն կստանձնի՝ կմասնակցի իր համայնքի շենացմանը:

...Ելույթներն ավարտվեցին: Նորակոչիկները գնում են Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մոմ վառելու: Ու նաեւ նրանց ծնողները, հարազատները, ինչպես եւ պատահական անցորդները:

էջ 2

Վրիժառության ախտը

Խորապես ցավելով պետք է խոստովանենք, որ մեր ժողովրդի մեջ սաստիկ զարգացած է վրեժխնդրության զգացմունքը, եւ մեր մարդը, վրեժ առնելու համար, հաճախ կանգ չի առնում ոչ մի միջոցի առջեւ: Եվ ավելի եւս զզվելին այն է, որ նա սիրում է իր վրեժը լուծել ու հարվածը տալ ուրիշի ձեռքով, ինքը միշտ մութի մեջ:

Ասիական այս գարշելի հատկությունը առանձնապես աչքի ընկավ եւ շատ ոճիրների պատճառ դարձավ մանավանդ վերջին շարժման խառնակ տարիներում, երբ իրար թշնամի մարդիկ իրենց ձեռքին գործիք էին դարձնում այս կամ այն կազմակերպության մարդկանց ու «գաղափարի» անունով իրենց հաշիվները մաքրում ամենայն անգթությամբ:

Բայց միայն խառնակ տարիները չեն. միշտ էլ գործի վրա են այդ չար, անհանգիստ հոգիները եւ չեն քաշվում մոլորության մեջ ձգելու նույնիսկ կառավարության պաշտոնյաներին:

Եվ որքա՜ն ջանք ու եռանդ, որքա՜ն, նույնիսկ, նյութական միջոցներ են գնում դրանց սարքած դավերի վրա, թե ինչ է՝ այսինչը ուզում է վրեժ հանել այնինչից: Եվ ի՜նչ խորամտություն, ի՜նչ սուր հայացք, ի՜նչ խոր ծանոթություն է հարկավոր գործի ու սովորությունների՝ այդ բոլոր մեքենայությունների տակից ճշմարտությունն ու արդարությունը հանելու համար:

Եվ, հիրավի, արդարությունը մեր երկրում շատ է տուժում մեր այս ցած հատկության պատճառով, այլեւ կորցնում ենք մեր բարոյական վարկն ու խոսքի արժեքը արդարադատության առաջ: Եվ ամենուրեք է այս ախտը մեր կյանքում, ու լոկ մտածելն անգամ սաստիկ, սաստիկ ծանր է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, 1910



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ սյունեցիներ

Սրտանց ու անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարվա ու Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Ցանկանում եմ, որ կյանքի կոչվեն Ամանորի շեմին պահած ձեր երազանքները, որ բոլորիդ օջախներում թագավորեն սերը, ջերմությունը, բարեկեցությունը, առողջությունն ու խաղաղությունը:

Հին տարին ճանապարհելիս՝ հիշում ենք նրա ընթացքում գրանցած հաջողությունները, ամփոփում ձեռքբերումներն ու հաստատուն հույսով եւ հավատով, որ գալիք տարում հասնելու ենք ավելիին՝ ծրագրեր կազմում: Իսկ դրա հիմքն արդեն իսկ տեսանելի դրական առաջընթացն է մեր հանրապետությունում եւ մասնավորապես՝ մեր մարզում. 2019-ը Սյունիքի համար բեղմնավոր էր ու լի իրադարձություններով: Ու դա նաեւ ձեր համբերատարության, վստահության, աշխատանքի, համատեղ ջանքերի ու նվիրվածության շնորհիվ էր, որի համար շնորհակալություն եմ հայտնում:

Կարծում եմ՝ մեր բոլոր համայնքներում տեսանելի են ձեռքբերումները, եւ 2020 թվական թեւակոխում ենք զարգացման նոր ծրագրերով, դրանց իրականացման հստակ հնարավորություններով ու արդեն հիմք ունեցող փոփոխություններով, որոնք շարունակություն եւ արդյունքներ կունենան:

Մենք վստահությամբ ենք նայում վաղվան ու լավատեսության համար հիմքեր ունենք, իսկ նորի իրականացման ու առավել ծաղկուն միջավայրի՝ համայնքի, մարզի, երկրի կառուցման բանալին, անշուշտ, եղել է եւ կլինի մեր ջանադիր աշխատանքը՝ հանուն բարիքի, արդարության եւ հայրենիքի առաջընթացի:

Սիրելի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորելով տարեմուտի կապակցությամբ՝ մաղթում եմ, որ Սուրբ Ծննդյան տոնի օրհնության զորությունը ուղեկցի ձեզ ողջ տարվա ընթացքում, եւ օգնի հաղթահարել դժվարությունները, արժանապատվությամբ լուծել բոլոր խնդիրները:

Շնորհավո՛ր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ սյունեցիներ, հավատացյալ ժողովուրդ, եղբայրներ եւ քույրեր

Կրկին հին եւ նոր տարին շաղկապող ժամանակի մեջ ենք կանգնած: Կրկին այն պահն է, որը եւս մեկ անգամ մեզ հրավիրում է խորհրդածել այն մեծ եւ մնայուն իրականության մասին, որ կյանքն իսկ է: Կրկին հուշերով ճանապարհում ենք հին եւ երազանքներով դիմավորում նոր տարին: Եվ կրկին տարիով ենք չափում կյանքի տեւողությունը, ու ամեն մի նոր տարի մեզ դնում է կյանքի նոր ընթացքի մեջ: Բայց տարիների հոլովույթով մենք դեպի մահ չենք գնում, այլ կյանքից կյանք, դեպի հավերժություն, քանի որ այս հավերժական եւ անփոփոխ կյանքի մեջ էականը ոչ թե ժամանակի փոփոխությունն է, այլ կյանքի եւ մարդու փոփոխությունը, որովհետեւ տարին նորանում է մարդու նոր հավատով ու նոր խոհերով, որովհետեւ մարդու գերագույն կոչումն ու պարտականությունն է ժամանակը լցնել նոր ու ազնիվ գործերով, ստեղծագործ աշխատանքով:

Եվս մի քանի ժամ, եւ ժամացույցներն աշխարհով մեկ պիտի ազդարարեն, որ 2020 թվականը մտել է իր պարտականությունների մեջ՝ մեզ համար բացելով մի նոր էջ՝ գրելու ուղիղ ճամփով դեպի փնտրած ճշմարտությունը գնալու սեփական պատմությունը, տալով հնարավորություն՝ ժամանակի մեջ սեփական գործով հավերժի գիրկն անցնելու համար:

Ուստի այս բարեբաստիկ առիթով շնորհավորում եմ բոլորիս՝ մաղթելով, որ Աստված օրհնի գալիք 2020 թվականը եւ երջանկություն ցանի բոլորիս կյանքում:

Թող եկող նորը լինի արդար գործի ու բարգավաճման տարի:

Թող եկող նորը լինի վերանորոգության, հոգեւոր զարթոնքի ու իղձերի իրականացման տարի:

Թող եկող նորը լինի անվտանգության, բարօրության ու խաղաղության տարի:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Օրհնությամբ՝

Տեր Մակար վրդ. Հակոբյան

Կապան

Սյունիքում մեկնարկեց ձմեռային զորակոչը

էջ 1

Վառեցին ու աղոթեցին՝ Տեր Աստված, հայոց բանակի զինվորը մեր տան օրհնությունն է, մեր պահապան հրեշտակը, մեր հույսն ու հավատը, պահապան եղիր նրան:

◈ ◈ ◈

Կրկին հայոց բանակը համալրվում է նոր մարտիկներով: Զինվորացու տղաները մեկնում են ծառայության՝ փոխարինելով սահմանադրական պարտքը կատարած իրենց ավագ ընկերներին: Սկսվել է հայոց ազգային բանակի ձմեռային թարմացման գործընթացը:

Զինակոչի շունչը նաեւ Կապան հասավ:

Դեկտեմբերի 23-ին Գարեգին Նժդեհի հուշահամալիրում ձմեռային զորակոչի անդրանիկ հավաքն էր: 25 պատանի պատրաստ էր մեկնելու հանրապետական հավաքակայան: Հրանտ Ստեփանյանը սովորում էր Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում՝ «Մետալուրգիա» մասնագիտությամբ: Ամիսներ առաջ է հրաժեշտ տվել դպրոցական նստարանին, այժմ էլ՝ ուսանողական: Առաջին քննաշրջանի քննությունները չի հանձնել, ասում է՝ զինծառայությունից հետո կշարունակի ուսումը: Այժմ մեկնում է ծառայության՝ միանալու ընկերներին:

Իսկ Աշոտ Վարդանյանը Երեւանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող է, իր նախընտրած մասնագիտությանը նա եւս տեր կդառնա բանակից զորացրվելուց հետո:

Տարբեր է մարդկանց տրամադրությունը: Բանակ ճանապարհողների ուրախ բարեմաղթանքներին ու խոսքին նաեւ միանում էր զինվորի ծնողի մտավախությունը. *«Կկարողանամ որդին տղամարդավարի ծառայել հայրենիքին, կդիմանամ բանակային կյանքի առաջին դժվարություններին»:*

Զորակոչի անդրանիկ հավաքին մասնակցում էին մարզային եւ համայնքային իշխանությունների, զինվորական ստորաբաժանումների եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, զինակոչիկների հարազատներ ու մտերիմներ: Զինակոչիկների՝ հանրապետական հավաքակայան մեկնելուն պատրաստ լինելու զեկույցից հետո օրվա խորհրդին պատշաճող հանրահավաք տեղի ունեցավ: Հայրենիքի ապագա պաշտպաններին ողջերթի խոսքեր հղեցին Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը, Սյունիքի մարզպետի խորհրդական Գոռ Թադեւոսյանը, Կապանի համայնքապետի տեղակալ Դավիթ Հայրապետյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը, Կապանի երկրապահ կամավորների միության նախագահ Սուրիկ Հովսեփյանը: Նրանց խոսքը հանգում է մի մաղթանքի. **թող բանակ զորակոչվողները լինեն խաղաղ օրերի զինվորներ:**

Արարողությունից հետո հայրենիքի ապագա պաշտպանները ծաղիկներ դրեցին հայ ազգի նվիրյալ եւ սպարապետ Գարեգին Նժդեհի հուշակոթողին:

Ավանդույթի համաձայն՝ զինակոչիկներին հանձնվեցին առաջին անհրաժեշտության պարագաներ:

Իսկ ամենավերջում փողային նվագախմբի հնչեցրած քայլերգեր, ողջագուրանքներ, բարի մաղթանքներ եւ արցունքներ...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ / ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Գորիս

Գորիս

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ՈՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ կապանցիներ

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Տոներ, որոնք ասոցացվում են հրաշքների, հեքիաթայինի եւ առեղծվածայինի հետ: Յուրաքանչյուր Ամանոր ենթադրում է նոր մեկնարկի սկիզբ՝ լի հույսերով ու սպասելիքներով, եւ միայն ճիշտ մեկնարկի դեպքում կկարողանանք սկիզբ դնել երազանքների ու նպատակների հաջող իրականացմանը:

Ամանորի նախաշեմին հետադարձ հայացք գցելով անցնող տարուն, վստահաբար ասում ենք, որ 2019 թվականը մեր համայնքի համար բազմաթիվ ծրագրերի իրականացման, նոր հաջողությունների, ձեռքբերումների եւ իրադարձություններով լեցուն տարի էր: Եվ դրանում, անշուշտ, մեծ էր նաեւ ձեր դերակատարումը, սիրելի կապանցիներ, քանի որ այդ ամենն իրականություն է դարձել ինչպես ձեր վստահության ու նվիրումի, այնպես էլ ձեր աջակցության շնորհիվ: Ուրեմն եկեք լցվենք ջանասիրությամբ ու լավատեսությամբ եւ անցնող տարուց վերցնենք այն դրական ձեռքբերումները, որոնք ուղենիշ կդառնան 2020թ. հետագա մեր աշխատանքներում:

Եվ քանի որ Ամանորն ու Սուրբ Ծնունդն ընտանեկան տոներ են, Ձեր ընտանիքներին մաղթում եմ առողջություն, կայունություն, ընտանեկան ջերմություն եւ անսահման սեր: Թող գալիք տարին բոլորիս համար լինի խաղաղության, գործնական եւ անձնական վերելքների ու հաջողությունների տարի:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Կապույտ հրաշալիքը կարող է չարիք դառնալ

Հարցազրույց «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վահե Հակոբյանի հետ

Պարոն Հակոբյան, որպես մեր զրույցի նախաբան, կուզեինք, որ ընթերցողին հիշեցնեիք, թե երբվանից եք ղեկավարում «Գազպրոմ-Արմենիա» ՓԲ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղը:

– Նախ ուզում եմ շնորհակալ լինել՝ մեր մասնաճյուղի գործունեությամբ հետաքրքրվելու համար: Մասնաճյուղը ղեկավարում եմ 2016 թվականի նոյեմբերի 9-ից, իսկ ընդհանրապես աշխատանքային գործունեությունս սկսել եմ «Հայգազ» ՓԲ ընկերության «Սյունիքգազ» գազաբաշխման տարածքային մասնաճյուղում՝ վթարանորոգման ծառայության ավագ վարպետ: 2005 թ. սեպտեմբերից մինչեւ 2006 թ. մարտ ամիսն աշխատել եմ շահագործման տեխնիկական բաժնում՝ ավագ ճարտարագետ: Այնուհետեւ՝ մինչեւ 2016 թ. նոյեմբերի 9-ը՝ վթարավերականգնման ծառայության պետ: Ինչպես տեսնում եք, աշխատանքային գործունեությունս մի ոլորտում է անցել՝ գազիֆիկացում եւ գազամատակարարում: Բնականաբար, նոր պաշտոնը ստանձնելուց հետո հարմարվելու խնդիր չեմ ունեցել, հիմնարկում ձեւավորված ավանդույթներին քաջատեղյակ էի եւ մտադիր եմ ոչ միայն դրանք պահպանել, այլեւ եղածին մի բան էլ ավելացնել:

– **Տարին մոտենում է ավարտին, ինչո՞վ էր այն նշանավոր ձեր մասնաճյուղի համար, ի՞նչը կառանձնացնեիք:**

– Ամեն մի փոքրիկ ձեռքբերում, յուրաքանչյուր խոչընդոտի հաղթահարում նշանավոր կարելի է համարել: Բաժանորդների թվի ավելացումը կարելի է առանձնացնել, նաեւ այն, որ անցնող տարում գազամատակարարման, գազիֆիկացման անվտանգությունն ու անխափան մատակարարումն ապահովվել է, վթարներից զերծ ենք եղել:

– **Այժմ քանի՞ բաժանորդ ունի մասնաճյուղը Սյունիքում (ըստ տարածաշրջանների), 2019-ին քանիսո՞վ ավելացավ դրանց թիվը, որ՝ բնակավայրը գազիֆիկացվեց:**

– Որպեսզի ավելի պատկերավոր լինի, հարցի պատասխանը կներկայացնեմ թվերով, ինչպես ցանկանում եք՝ ըստ տարածաշրջանների: Տարեսկզբին մարզի կտրվածքով ունեցել ենք 25 455 բաժանորդ, տարեվերջին այն կազմել է 25 759, այսինքն՝ գազասպառողների թիվն ավելացել է 304-ով: Կապանի տարածաշրջանում եղել է 10 309, հիմա՝ 10 449 (ավելացվել է 140-ով), Քաջարանում՝ 2180, 2219 (ավելացել է 39-ով), Գորիսի տարածաշրջանում՝ տարեսկզբին՝ 7512 , տարեվերջին 7573 (ավելացել է 61-ով), Սիսիանում՝ տարեսկզբին 5454, տարեվերջին՝ 5518 (ավելացել է 64-ով): Դրանից զատ՝ կատարվում են ներտնային շինմոնտաժային աշխատանքներ, գազի սպասարկման կետի փոփոխություն կամ ավելացում: Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 267 կետի ավելացում կամ փոփոխություն:

2019 թվականին գազիֆիկացվել է 18 արտադրական հիմնարկ-ձեռնարկություն: Տարեսկզբին 470-նն էին, տարեվերջին՝ 488-ը: Անցնող տարում նոր բնակավայր չգազիֆիկացվեց:

– **Կառանձնացնեի՞ք գազ սպառողխոշորհիմնարկ-ձեռնարկությունները, որոնք գազիֆիկացվել են 2019-ին:**

– Խնդրեմ, Կապանի մանկապատանեկան մարմնամարզության մարզադպրոցը, Քաջարանի արվեստի դպրոցը, Կապանի ոստիկանության անձնագրային բաժանմունքը, Կապանի «Վայբլ» ՍՊ ընկերության կրի արտադրամասում երկու նոր վառարան է տեղադրվել, ինչը զգալիորեն ավելացրել է գազասպառումն այդ ձեռնարկությունում: Բայց մարզի խոշոր գազասպառողը եղել է ու կա Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, ինչպես արդեն նշեցի, «Վայբլ» ՍՊ ընկերությունը, այնուհետեւ ավտոգազալիցքավորման ճնշակայանները, որոնք ամսական տասը հազար խորանարդ մետրից ավելի գազ են սպառում: Միայն Կապանում այդպիսի վեց կայան կա: Որոշակի տարեշրջանում լուրջ գազասպառողներ են ջերմոցները, ասֆալտագործարանները:

– **Ինչպե՞ս է ընթանում Մեղրի քաղաքի գազիֆիկացումը. տարօրինակ վիճակ է ստեղծվել, Իրան-Հայաստան գազատարն անցնում է Մեղրիով, բայց մեղրեցին չի օգտվում կապույտ վառելիքից: Դեռեւս 2016 թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Մեղրի եւ Ագարակ քաղաքներում կառուցված գազի բաշխման ցանցի պաշտոնական բացումը, բայց... Օրերս եղաք Մեղրիում: Մեղրի բնակավայրի գազիֆիկացման մասին ահազանգ հնչեց նաեւ Ազգային ժողովում:**

– Մեղրիում գազասպառման համակարգ ձեւավորված է, արտաքին գազատարը կառուցված է: Հիմնական խնդիրն այն է, որ բնակիչների հետ որոշակի աշխատանքներ պիտի տարվեն: Գազ սպառողները պիտի իմանան, որ ներտնային շինմոնտաժային աշխատանքները պիտի կատարվեն գազի մատակարարման եւ օգտագործման կանոնների համաձայն: Ի՞նչպես է դա լինում: Բնակչի դիմումն ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է միացման պայմանագիր: Էսքիզի հիման վրա կազմվում է նախագիծ: Շինմոնտաժային աշխատանքները կատարելու համար բնակիչը վճարում է նախագծի 80 տոկոսը, որպես կանխավճար եւ 30 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ավարտին հասցնել բոլոր աշխատանքները: Այդ ամենից հետո բնակչի հետ կատարում ենք վերջնահաշվարկ, տեղադրվում է հաշվիչ եւ «Էյ-Ի-Ջի»– սերվիս ՍՊ ընկերության աշխատակցի հետ բնակարանի գազամատակարարման պայմանագիր է կնքվում:

> *«Գազպրոմ-Արմենիա» ՓԲ ընկերության եւ ՀՀ կառավարության միջեւ բանակցություններ են ընթանում, եւ որքան հայտնի է՝ մինչեւ ապրիլ գազի սակագնի փոփոխություն չի նախատեսվում*

Ինչ վերաբերում է Մեղրիին, այդտեղ՝ այն շենքերում, որ գազիֆիկացվել են, դեֆլեկտորները բացակայում են: Առանց դրանց գազի շահագործումը, սպասարկումը դիտվում են որպես տեխնիկական նորմերի խախտում: Մի խոսքով, բնակիչն էլ պիտի իմանա իր անելիքներն ու պարտականությունները: Մենք էլ պատրաստ ենք օգտակար լինել նրան, գազի շահագործման վերջին մանրուքը հասանելի դարձնել՝ սկսած մոնտաժումից ընդհուպ գազի օգտագործման կանոնները:

– **Գազատարը նաեւ խնամք է պահանջում, այս առումով ի՞նչ կասեք, ինչպիսի՞ն են մարզի գազատարների վիճակը.**

– Գազատարները մեր ոլորտի սնուցող երակներն են: Դրանք երկու տեսակի են՝ ստորգետնյա եւ վերգետնյա: Որոշակի ժամանակահատվածի կտրվածքով նախատեսվում են շահագործման, սպասարկման եւ ընթացիկ նորոգման ծախսեր, որոնք բաժանում ենք ըստ ամիսների եւ կատարում համապատասխան աշխատանքներ: Դրանք միտված են գազատարները ստուգելուն՝ հենարաններից սկսած մինչեւ դրանց տեխնիկական վիճակը: Դա՝ վերգետնյա գազատարներին առնչվող: Իսկ ստորգետնյա գազատարները երկու տարին մեկ անգամ տեխնիկաշահագործման բաժնի աշխատակիցներն այց են կատարում ու ստուգում գազատարների վերին ծածկույթի տեխնիկական վիճակը: Ստորգետնյա գազատարների մեծ մասը Սիսիանի տարածաշրջանում է:

Իսկ վերգետնյա գազատարների առնչությամբ մասնաճյուղի փականագործները պարբերաբար այցեր են կատարում:

– **Մասնաճյուղի տեխնիկական զինվածության, կադրերով ապահովվածության առումով ի՞նչ կփոխանցեք:**

– Նման խնդիր չունենք: Համապատասխան մեքենասարքավորումներ ունենք, մասնագետները վերապատրաստում են անցել, նրանց պարբերաբար այցերի շնորհիվ, պիտի փաստեմ, որ զերծ ենք մնացել վթարներից: Գեղարքունիքի եւ Արագածոտնի մարզերում վթարները հաճախադեպ են՝ հավանաբար պայմանավորված եղանակային պայմաններով: Այդ մասին տեղեկանում ենք խորհրդակցությունների ժամանակ: Իմ՝ երեք տարվա պաշտոնավարման ժամանակ խոշոր վթար չի եղել՝ կոռոզիայի կամ մեկուսիչ շերտի ոչ ճիշտ ուսումնասիրությունից:

– **Վերջերս շատ է խոսվում գազի սակագնի մասին: Խնդրո առարկայի առնչությամբ ի՞նչ կփոխանցեք ընթերցողին, թե՞ իրավասու չեք այդ հարցին պատասխանել:**

– Իրավասու լինեմ, թե չլինեմ, հարցի առնչությամբ կպատասխանեմ, որ «Գազպրոմ-Արմենիա» ՓԲ ընկերության եւ ՀՀ կառավարության միջեւ բանակցություններ են ընթանում, եւ որքան հայտնի է՝ մինչեւ ապրիլ գազի սակագնի փոփոխություն չի նախատեսվում՝ նշված երկու կողմի ձեռք բերած որոշակի պայմանավորվածությունների շնորհիվ:

– **Ի՞նչ է պարտավոր անել բնակիչը (գազ սպառողը), ընդհանրապես բնական գազից օգտվելու առումով ի՞նչ կփոխանցեիք բնակչությանը եւ հիմնարկ-ձեռնարկություններին:**

– Բնակիչներին հորդորում եմ՝ ներտնային գազասպառման համակարգում դժբախտ դեպքերից խուսափելու համար պահպանել կենցաղում կապույտ վառելիքից անվտանգ օգտվելու կանոնները: Ի դեպ, դժբախտ պատահարների 80-90 տոկոսը տեղի է ունենում բնակչի մեղքով: Նախ՝ առանց հսկողության չթողնել անվտանգության ավտոմատ համակարգեր չունեցող գազասարքերը: Երկրորդ կարեւորագույն պահանջն այն է, որ էլեկտրաանջատիչից չանջատել գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ համակարգը: Երբ այդ համակարգը սկսում է ազդանշան տալ, գազասպառողը 1.04 (շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն) զանգելու փոխարեն՝ պարզապես հարմար է համարում, այն անջատել սնուցումից: Կարելի է ասել՝ գլխացավանքից պրծնելու համար, դրանով մեծապես վտանգի տակ դնելով իր եւ ընտանիքի անդամների կյանքը:

Նաեւ մարդկանց մեջ թյուր պատկերացում է ձեւավորվել, որ այդ սարքն ահագին հոսանք է օգտագործում, բայց ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, դրա տարեկան էլեկտրաէներգիայի ծախսը կազմում է ընդամենը 8,6 կիլովոլտ՝ մոտ 400 դրամ:

Մեծ վտանգ է պարունակում այն հանգամանքը, երբ գազօջախներն օգտագործում են բնակարանը տաքացնելու նպատակով: Շմոլ գազն աստիճանաբար կուտակվում է փակ տարածքում, թթվածինը պակասում է, թթվածնի քաղց է առաջանում, ինչը կարող է ողբերգության պատճառ դառնալ, ինչպես վերջերս տեղի ունեցավ Նոր Հաճն բնակավայրում, երբ մի ընտանիքից հինգը շմոլ գազի թունավորումից զրկվեց կյանքից: Կապույտ վառելիքը բարիք է, բայց կարող է նաեւ չարիք դառնալ:

Չի թույլատրվում փոխարինել, նորոգել եւ տեղափոխել գազասարքերը: Արգելվում է օգտվել գազասարքից, եթե գազասարքն անսարք է, գազն այրվում է դեղնակարմրագույն բոցով կամ այն կտրվում է այրիչից:

Անհրաժեշտ է առատ ձյուն տեղալու եւ ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը եւ մաքրել գլխամասը:

– **Օրեր առաջ մայրաքաղաքում խորհրդակցությունում էիք, ի՞նչ հարցեր քննարկվեցին՝ եւ մասնավորապես Սյունիքին վերաբերող:**

– Նման խորհրդակցություններ պարբերաբար են անցկացվում, քննարկվում են հաշվետու ժամանակաշրջանում բնական գազի կորուստների չափաքանակները, իրացված բնական գազի դիմաց վճարների հավաքումը եւ այլ խնդիրներ ու տրվում են հանձնարարականներ: Այս անգամ, մասնավորապես, հանձնարարական տրվեց «Էյ-Ի-Ջի» ծառայության հետ համատեղ ստուգայց կազմակերպել ձայնային ազդանշանային համակարգերի որակը ստուգելու ուղղությամբ եւ արդյունքները ներկայացնել ընկերությանը: Սա նաեւ պայմանավորված է Նոր Հաճն բնակավայրում տեղի ունեցած ողբերգությամբ:

– **Ի՞նչ կավելացնեիք ասվածին, որպես զրույցի վերջաբան:**

– Նոր տարվա եւ Սուրբ ծննդի տոներին մարդիկ հիմնականում տանն են լինելու, ավելի շատ են օգտվելու գազասարքերից՝ գազօջախ, վառարան, ջրատաքացուցիչ: Խորհուրդս է՝ լինել առավել ուշադիր եւ զգոն, ազդանշանային սարքի միացման դեպքում զանգահարել 1.04, որպեսզի զերծ մնալ դժբախտ պատահարից:

– **Ամանորի Ձեր մաղթանքը սյունեցիներին եւ հայ ժողովրդին, ղեկավարածդ կոլեկտիվի աշխատակիցներին:**

– Պատերազմ տեսած Սյունիքի ժողովրդին, նախեւառաջ, մաղթում եմ խաղաղություն, նրանց օջախներին՝ ընտանեկան ջերմություն, սեր, համերաշխություն, համախմբվածություն: Հայ ժողովուրդը դառնություններ շատ է տեսել, լավ օրի է արժանի: Իսկ իմ կոլեկտիվի անդամներին ցանկանում եմ առողջություն, ուժ ու եռանդ, անփորձանք ու անխափան աշխատանք:

Զրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ԴԱՎԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ. «Մենք այստեղ ենք ոչ թե քաղաքականությամբ կամ գովազդով զբաղվելու համար, այլ մեր գործունեությամբ բարիք ստեղծելու առաքելությամբ, որպեսզի բարելավենք համայնքի բնակիչների կյանքի որակը»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը

Դարոն Թովմասյան, նախ՝ շնորհակալություն հարցազրույցի հրավերն ընդունելու համար:

Մեր հանդիպումներից տպավորություն ունենք, որ Դուք անմիջական մարդ եք եւ բարդույթներ չունեք լրագրողների հետ շփվելու հարցում:

Այնպես որ՝ անկեղծ զրույց ենք ակնկալում:

– Ձեզ ենք շնորհակալ՝ ընկերության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

– **Քանի որ մեր առաջին հրապարակային զրույցն է, ուստի եւ կուզենայինք նախ ճշտել՝ ո՞վ է (ովքե՞ր են) Կապանի կոմբինատի սեփականատերը (սեփականատերերը):**

– Ընկերությունը բրիտանական «Չաարատ Գոլդ Ինթերնեշնլ Լիմիթիդ» (Chaarat Gold International Limited) ընկերության ակտիվներից մեկն է, որն արագ զարգացող հանքարդյունաբերող կազմակերպություն է եւ հավակնում է դառնալ ոսկու արտադրության խոշոր ընկերություններից մեկն աշխարհում: Ընկերության կենտրոնական գրասենյակը գտնվում է Լոնդոնում: Հայաստանից բացի ակտիվներ ունի նաեւ Ղրղզստանի Հանրապետությունում:

– **Մի երեւույթի մասին, որ նույնիսկ զարմանքի տեղիք է տալիս (երբեմն նույնիսկ տարակուսանքի). վերջին 20 տարում, կարելի է ասել, ժամանակ առ ժամանակ ու անընդհատ փոխվում են այդ ընկերության սեփականատերերը:**

Ինչո՞վ է դա բացատրվում: Դիտորդների տպավորությամբ՝ կամ շահութաբեր չէ այդ տնտեսությունը կամ կան ստվերային խոչընդոտներ, որոնք, ի վերջո, հիասթափեցնում են սեփականատիրոջը...

– Դա սովորական երեւույթ է, որեւէ արտասովոր բան չկա. սա բիզնես է առաջին հերթին, եւ բիզնեսում առք ու վաճառք կարող է անընդհատ լինել կամ առհասարակ չլինել: Այնպես ստացվեց, որ Կապանի կոմբինատի դեպքում մի քանի անգամ սեփականատեր փոխվեց, սակայն կարող եմ վստահեցնել, որ որեւէ խոչընդոտ չկա: Հարկ եմ համարում նշել նաեւ, որ ընկերությունը թե՛ կառավարության եւ թե՛ տեղական ղեկավար մարմինների հետ աշխատում է օրենքի սահմաններում, ու վերջիններիս կողմից եւս որեւէ խոչընդոտի չենք հանդիպել:

– **Ի՞նչ է այսօր իրենից ներկայացնում «Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը. արտադրական հիմնական ցուցանիշները...**

– Ընկերությունը շահագործում է Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը՝ ստորգետնյա եղանակով: Արտադրում է պղնձի եւ ցինկի խտանյութեր՝ ոսկու եւ արծաթի պարունակությամբ: Նախորդ տարիների համեմատ արտադրական ցուցանիշների աճ ենք ապահովել, մասնավորապես 2019 թվականին հանքաքարի հանույթը 7 տոկոսով ավելին է, քան նախորդ տարի, հանքաքարի վերամշակումը 16 տոկոսով է ավելին, պայմանական ոսկու թողարկումը՝ 3 տոկոսով, իսկ հորատանցման ցուցանիշը՝ 15 տոկոսով:

– **Մի քիչ ավելի հանգամանալից՝ աշխատատեղերի մասին, որովհետեւ ընկերությունը սոցիալական մեծ խնդիր է լուծում տարածաշրջանում՝ ապահովելով մոտ 1000 աշխատատեղ:**

Եվ, իհարկե, աշխատավարձերի մասին. մեկ տարի առաջ հենց այդ հարցն էր շարժառիթը, որ գործադուլներ տեղի ունեցան:

– «Չաարատ Կապանը» համայնքի անձնամեծ գործատուն է, մեր ընկերությունն այսօր 1100-ից ավելի աշխատակից ունի, ինչպես նաեւ շուրջ 250-ը՝ ընկերությանը ծառայություն մատուցող կապալառուների մոտ: Աշխատակիցների գերակշիռ մասը Կապանի ու շրջակա բնակավայրերից է: Ինչ վերաբերում է աշխատակիցների աշխատավարձերին, ապա որոշ բաժիններում բարձրացում իրականացվել է: Նաեւ ծրագիր ենք իրականացնում, ըստ որի՝ աշխատակիցներին հիմնական աշխատավարձերից բացի խրախուսում ենք ամենամսյա պլանների կատարման համար՝ պարգեւավճարով՝ աշխատավարձի 15-20 տոկոսի չափով՝ կախված այդ ամսվա արտադրական ցուցանիշներից: Նաեւ ամեն ամիս իրականացնում ենք մրցույթ ընկերության ստորգետնյա լեռնային աշխատանքներում զբաղված հիմնական մասնագիտությունների աշխատակիցների միջեւ: Մրցույթի ընթացակարգով նախատեսված պայմաններով ընտրվում են ամսվա լավագույն աշխատակիցներ, ովքեր, բացի ընկերության բոլոր աշխատակիցներին տրվող վերը նշված պարգեւավճարներից, լրացուցիչ խրախուսվում են:



– **Ինժեներատեխնիկական աշխատակիցների մասին:**

Ընկերությունն ունի՞ համապատասխան պրոֆեսիոնալ կադրեր:

Արդյո՞ք նրանք տեղացիներ են, թե՞ հրավիրվածներ: Ի՞նչ է արվում տեղացի մասնագետներ պատրաստելու ուղղությամբ:

– Կապանի կոմբինատն աշխատանքային հարուստ անցյալ ունի, այստեղ մասնագիտական աճ ու փորձ են ձեռք բերել ոլորտի տասնյակ երախտավորներ, որոնց ավանդածով նաեւ այսօր ենք շարունակում աշխատել: Մեր աշխատակիցները, գրեթե բոլորը, տեղացի են, եւ երախտագիտությամբ պետք է նշեմ, որ ունենք հմուտ ու խելացի թիմ, իհարկե, ժամանակի հետ համընթաց ենք քայլում եւ միջազգային լավագույն փորձն աչքի առաջ ունենալով՝ ավելի ենք լավացնում աշխատանքային պայմանները, պարբերաբար հրավիրում ենք ոլորտի առաջատար մասնագետներ՝ մեր աշխատակիցների մասնագիտական հմտություններն էլ ավելի զարգացնելու համար:

– **Թեեւ համեմատաբար երիտասարդ եք, բայց լեռնահանքային արդյունաբերության ոլորտում փորձառու եւ դրական համբավ ունեցող ղեկավարի ճանաչում ունեք:**

Որո՞նք են, ըստ Ձեզ, Սյունիքում գործող հանքարդյունաբերական որեւէ ձեռնարկության գործունեության գլխավոր չափանիշները:

– Կարծում եմ՝ թափանցիկ աշխատառձը, ազնվությունը, մարդկային ռեսուրսները, հարգանքը, ինչպես նաեւ բնությունից տրված հարստության ու շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ վերաբերվելը՝ գործունություն իրականացնող հանքարդյունաբերական ընկերության հիմնական չափանիշները պետք է լինեն:

– **Մի կարեւոր հանգամանք ենք նկատել Ձեր գործելաոճի մեջ, որ գնահատելի է:**

Վերջին 20 տարում, անկեղծ լինենք, այդ ընկերության գործադիր ղեկավարները շատ հաճախ կոմբինատը դարձրել էին քաղաքական մահակ կամ գործիք տարածքի կամ համայնքի օրվա իշանությունների ձեռքին:

Դուք, որքանով տեսնում ենք, այդ ճանապարհով չգնացիք:

Ճի՞շտ է մեր դիտարկումը:

– Մենք այստեղ ենք ոչ թե քաղաքականությամբ կամ գովազդով զբաղվելու համար, այլ մեր գործունեությամբ բարիք ստեղծելու առաքելությամբ, որպեսզի բարելավենք համայնքի բնակիչների կյանքի որակը, ապահովենք նրանց աշխատանքով, ինչու չէ՝ նաեւ եկամուտ ապահովել բաժնետերերի համար:

> *Լենհանքերի խնդիրը գլոբալ է, որը պետք է համատեղ լուծվի՝ կառավարություն, համայնք եւ հետաքրքրված հանքարդյունաբերող: Խնդիրը լուծելու համար նախ պետք է ուսումնասիրություններ իրականացվի՝ հասկանալու համար՝ հանքը հետագա շահագործման հնարավորություն ունի՞, թե ոչ:*

– Չենք ուզում անդրադառնալ նախորդ սեփականատիրոջից ստացած ժառանգությանը, թեեւ դա ոչ պակաս կարեւոր հարց է:

Մի հարց, այդուհանդերձ, չենք կարող շրջանցել:

Մամուլը պարբերաբար մատնացույց է անում երբեմնի Լենհանքերի կամ Կավարտի հանքերի տարածքից Կապանի բնապահպանական վիճակին սպառնացող վտանգի մասին:

Նախորդ սեփականատերերից մեկը կարողացել է հրաժարվել այդ հանքավայրից՝ գործող օրենքի համաձայն չսառեցնելով (ռեկուլտիվացիայի չենթարկելով) հանքավայրը:

Ձեր վերաբերմունքը Լենհանքերի նման վիճակի հանդեպ, խնդրի լուծման ուղիները:

– Լենհանքերի խնդիրը գլոբալ է, որը պետք է համատեղ լուծվի՝ կառավարություն, համայնք եւ հետաքրքրված հանքարդյունաբերող: Խնդիրը լուծելու համար նախ պետք է ուսումնասիրություններ իրականացվեն՝ հասկանալու համար՝ հանքը հետագա շահագործման հնարավորություն ունի՞, թե ոչ: Այս աշխատանքներն իրականացնելու համար մեծ ռեսուրսներ են անհրաժեշտ:

– Հիմա Ձեր գլխավորած ընկերությունը ո՞ր հանքավայրն է շահագործում:

Ժամանակին Շահումյանի հանքավայրում մեծ ծավալի հետախուզական-երկրաբանական աշխատանքներ տարվեցին (նախորդ սեփականատիրոջ կողմից), հետո սառեցվեց, հիմա ի՞նչ վիճակում է այդ հանքավայրը:

– Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրն ենք շահագործում: 2020 թվականի համար մշակվում է ծրագիր՝ Շահումյանի հանքավայրի արեւմտյան եւ արեւելյան թեւերում հետախուզական աշխատանքներ տանելու համար, որը միտված է ավելացնելու հաստատված հանքաքարի պաշարը, ինչն էլ կհանգեցնի հանքավայրի շահագործման ժամկետների երկարացմանը:

– Հետաքրքիր է՝ նախորդ սեփականատերերի, նախորդ տնօրենների հետ շփվելու առիթներ ունեցե՞լ եք:

Եթե այո, ապա ի՞նչ տպավորություններ ունեն նրանք Կապանի կոմբինատից կամ ի՞նչ խորհուրդներ են փորձում տալ Ձեզ, թեեւ նրանց խորհրդի կարիքը, կարծում ենք, չեք կարող ունենալ:

– Այո ունեցել եմ, այսօր էլ շարունակում ենք լավ հարաբերությունն ունենալ, ինչն ավելի շատ ընկերական է, քան բիզնեսի հետ կապված:

– Ընկերության բնապահպանական քաղաքականության մասին:

Եվ, իհարկե, ինչպե՞ս եք գնահատում ընկերության ազդեցությունը՝ մերձակա բնակավայրերի բնապահպանական վիճակի ու շրջակա միջավայրի վրա:

> *Վերջերս Կապանի պոլիկլինիկայի նորովի հիմնանորոգած Կանանց կոնսուլտացիայի բաժանմունքի կարմիր ժապավենը կտրեցինք, որը եւս մեծ խնդիր լուծեց համայնքի համար: Բաժանմունքի վերանորոգումից բացի մեր շինարարները շարունակում են աշխատանքներ իրականացնել պոլիկլինիկայի այդ հարկաբաժնի ամբողջ մասում...*

Գեղանուշի պոչամբարի ընդլայնման հետ կապված՝ մի քանի տարի առաջ ծրագրեր էին ներկայացվում հանրային քննարկման, որոնք մերժման էին արժանանում, ի՞նչ վերջաբան ունեցավ պոչամբարի ընդլայնման շուրջ առաջացած խնդիրը:

– Շրջակա միջավայրի պահպանությունը մեր գերակա առաջնահերթություններից է, եւ գործունեության առաջին օրվանից «Հաարատ Կապանն» իրականացնում է ամենատարբեր ծրագրեր այդ ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Ինչ վերաբերում է Գեղանուշի պոչամբարի ընդլայնմանը, ապա տեղեկացնում եմ, որ նման ծրագիր չի իրականցվել եւ չենք էլ պատրաստվում:

Միայն պոչամբարի պատվարների լրացուցիչ ամրության ծրագիր ենք իրականացնում: Միջազգային պրակտիկայից ելնելով այս ծրագիրն իրականացնում ենք՝ երաշխավորված ու հանգիստ լինելու համար, որ պոչամբարի հետագա շահագործումն ապահով լինի: Պատվարների ամրացման աշխատանքներին ընկերությունը ներգրավել է միջազգային հեղինակավոր կազմակերպության:

– Որո՞նք են ազդակիր համայնքները, ի՞նչ ծրագրեր եք իրականացնում այդ համայնքներում կամ բնակավայրերում:

– Ընկերության ազդեցության ներքո Կապան խոշորացված համայնքն է, եւ համայնքապետարանի հետ սերտ համագործակցում ենք ՝ մեր մասնակցությունն ունենալով համայնքում իրականացվող ծրագրերին: Դեռեւս հունիս ամսին ընկերության եւ Կապան համայնքի միջեւ կնքվեց սոցիալ-տնտեսական համագործակցության ծրագիր, որի շրջանակներում ընկերությունը 100 միլիոն դրամ է տրամադրել՝ Կապան քաղաքի Լեռնագործների 16 հասցեում վերակառուցվող նախադպրոցական ուսումնական հաստատության շինարարական աշխատանքների համար:

Այս տարի ընկերության սոցիալական ծրագրերի հիմնական ուղղվածությունը երեխաների համար էր, որոնք հաճույքով ու մեծ պատասխանատվությամբ ենք իրականացրել: Վերջերս Կապանի պոլիկլինիկայի նորովի հիմնանորոգված

Կանանց կոնսուլտացիայի բաժանմունքի կարմիր ժապավենը կտրեցինք, որը եւս մեծ խնդիր լուծեց համայնքի համար: Բաժանմունքի վերանորոգումից բացի մեր շինարարները շարունակում են աշխատանքներ իրականացնել պոլիկլինիկայի այդ հարկաբաժնի ամբողջ մասում՝ մաքուր ու բարեկեցիկ պայմաններ ստեղծելով մեր բնակիչների համար: Շուտով ավարտին է մոտենալու նաեւ մեկ այլ ուրիշ նախաձեռնություն՝ Կապանի թիվ 2 երաժշտական ու գեղարվեստի դպրոցների շենքի հիմնանորոգումը: Ծրագրերը շատ են, որոնք, կարծում եմ, առանձին բոլորը նշել հնարավոր չէ, իսկ Գեղանուշ բնակավայրը, լինելով ընկերության ազդեցության ներքո, այստեղ մեր գործունեության շրջանակներն ավելի ընդլայնված են. Գեղանուշում ծրագրերն ու նախաձեռնությունները չեն ավարտվում: Այստեղ իրականացվող կարեւոր ծրագրերից, որը կառանձնացնեմ, Գեղանուշի նախակրթարանի վերանորոգումն էր: Ինչպես գիտեք, տարիներ շարունակ այստեղ նախակրթարան չի գործել, սակայն պահանջարկը կար:

– Գործընկերային հարաբերությունների մասին:

Տարիներ առաջ Սյունիքի հանքարդյունաբերական ընկերություններում գլխավոր առաջնահերթություններից մեկը հարաբերությունն էր տեղական տնտեսվարողների հետ:

Այսինքն, եթե հնարավոր էր որեւէ օժանդակ նյութ ձեռք բերել տեղական արտադրողից կամ գործարարից, եթե հնարավոր էր որեւէ ծառայություն իրականացնել տեղացիների միջոցով, ապա այդպես էլ արվում էր:

Այնուհետեւ փոխվեցին մոտեցումները:

Արդյո՞ք Դուք կարեւորում եք այդ գործելակերպը եւ ի՞նչ պատկեր ունենք ներկայումս այդ առումով:

– Տեղական տնտեսվարողների հետ գործընկերային հարաբերություններն այսօր էլ առաջնային են ընկերության համար, ինչը մենք կարեւոր ենք համարում, քանի որ ընկերությունն իր գործունեությունն է իրականացնում այստեղ, եւ մենք ձգտում ենք թե՛ աշխատակիցների ներգրավվածությունը եւ թե՛ ծառայությունների մատուցումն իրականացնել տեղացիների միջոցով:

– Հանքարդյունաբերությունն աշխարհի մասշտաբով անընդհատ արդիականացվում է. այդպիսի տպավորություն ենք ստանում, երբ հետեւում ենք ոլորտը լուսաբանող հրապարակումներին:

Ի՞նչ է կատարվում Կապանի կոմբինատում այդ առումով:

– Հասկանում ենք, իհարկե, դա ոչ փոքր ներդրումներ է պահանջում:

Մեր ընկերությունը եւս ժամանակին համընթաց է քայլում, եւ օր-օրի էլ ավելի ենք կատարելագործվում: Ծրագրեր ենք մշակում աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման, նոր սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ. որոշ տեխնիկական միջոցներ արդեն ձեռք են բերվել, հները՝ թարմացվել: Ձգտում ենք հիմնական աշխատանքներն ավտոմատացված իրականացնել՝ ձեռքի աշխատանքը նվազագույնի հասցնելու համար:

– Ի՞նչ կարեւոր հարցի կուզենայիք անդրադառնալ, որ չհնչեց մեր զրույցի ընթացքում:

– Ձեր լսարանն ու առիթն օգտագործելով՝ ուզում եմ շնորհավորել մարզի բոլոր բնակիչներին՝ գալիք տոների կապակցությամբ, շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին, տեղական կառավարման մարմիններին՝ համագործակցության համար եւ մաղթել, որ գալիք տարին նոր ծրագրերի իրականացման ու հաջողությունների տարի լինի Սյունիքի համար:

– Պարոն Թովմասյան, շնորհակալություն հարցազրույցի համար, Ձեզ եւ Ձեր գլխավորած ընկերությանը՝ հաջողություն:

Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Մենք այցելեցինք Բղենո բերդ՝ չափազանց ամրություններով եւ ասփվածասպեղծ պարիսպներով

«Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբն իր բարեկամներ Ժորա Ալեքսանյանի, Գրիշա Հարությունյանի եւ Սուրեն Վարդանյանի հետ հոկտեմբերի 13-ին մեկնեց Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների ամենահզոր բերդերից մեկը՝ Բղենո բերդը, որ գտնվում է Հաբանդի, Բաղքի եւ Ծղուկի միջեւ գտնվող Բղեն գավառում, Որոտան գետի աջ ափի բարձրադիր վայրում՝ Դաութլու գյուղից հարավ-արեւելք:
Դա մոտիկ է այն վայրին, որտեղ Վարարակն գետը միախառնվում է Որոտանին:

Բղենո բերդի աշխարհագրական տեղագրությունը երկար ժամանակ հայտնի չի եղել:

Ոմանք դա շփոթել են Գյավուրի բերդի հետ՝ նկատի ունենալով, որ Բղեն գավառը հածախ մաս է կազմել Հաբանդի:

Իսկ պրոֆեսոր Թ. Հակոբյանի կարծիքով՝ բերդը գտնվել է Բղենո Նորավանքի մերձակայքում:

Ոմանք էլ Բղենո բերդը նույնացրել են երբեմնի Կուբաթլուի շրջանի Բախտիարլու գյուղի հարավային մասում՝ Որոտան (Բարգուշատ) գետի աջ բարձրադիր ափին գտնվող բերդի ավերակների հետ:

Ճշմարիտը, կարելի է ստույգ ասել, վերջին տարբերակն է:

◈ ◈ ◈

Բղենո բերդի մասին առաջին գրավոր հիշատակությանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» կոթողային գործում:

Պատմիչը թվարկում է Սյունյաց աշխարհի բերդ-ամրոցները՝ որպես սկզբնախոսք կատարելով այսպիսի պատկերավոր արտահայտություն. «Իսկ այստեղ (գտնվող) ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, եւ միայն Տերը կարող է մատչելի դարձնել, հետեւյալներն են...»:

Այդ շարքում Ստեփանոս պատմիչը նշում է նաեւ Բղենո բերդը:

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի 12 գավառի հարկացուցակում նշում է նաեւ Բղեան գյուղը՝ 6 չափ հարկով՝ Ծղուկ գավառի կազմում:

Բղենո բերդի եւ Բղեան գյուղի՝ իրար մոտ գտնվելը խիստ հավանական է, քանզի, ինչպես նշեցինք, Բղեն գավառը գտնվել է Հաբանդի, Բաղքի եւ Ծղուկի միջեւ:

Մեզ ուղեկցող Նարեկ Հակոբջանյանը, ինչպես եւ նրա հայրը՝ Արտուշ Հակոբջանյանը, մատնացույց են անում մի վայր՝ Բղենո ամրոցի հյուսիս-արեւելյան ստորոտում, որտեղ, ըստ ավանդության,

Սուրեն Վարդանյան

Նարեկ Հակոբջանյան

Ժորա Ալեքսանյան

Գրիշա Հարությունյան

գյուղ է եղել, որն էլ երկրաշարժերից մեկի ժամանակ ամբողջովին հողի տակ է անցել, ինչպես մեզ հայտնի Ակոռի գյուղը՝ Մեծ Մասիսի վիհի եզրին գտնվող, 1840-ի երկրաշարժից հետո:

Հիմա այնտեղ խորհրդավոր մի խոռոչ կա, որից ամռանը խիստ սառն օդ է ելնում, իսկ ձմռանը՝ տաք օդ:

Ամենայն հավանականությամբ հենց դա էլ Բղեան գյուղն է եղել՝ ամրոցի ստորոտում:

◈ ◈ ◈

Բղեն գավառի աշխարհագրական տեղագրության մասին:

Ստեփանոս պատմիչն այդ անվամբ է կոչում Բաղքի Բղենո բերդի շրջակայքը:

Մյուս աղբյուրներում այդ անունով գավառ չի նշվում:

Աշխարհագրական դիրքի վերաբերյալ, այդուհանդերձ, տարբեր տեսակետներ կան:

Եվ գավառը հավանաբար կազմում էր Բաղք-Աձանանի, Ծղուկի, հյուսիսային կողմից՝ Հաբանդ գավառի սահմանամերձ շրջանը:

Մյուս կողմից՝ Ս. Բարխուդարյանը Բղենո նորավանքն իր շրջակայքով դրել է Հաբանդ գավառի տարածքում:

◈ ◈ ◈

Մեր արշավախումբը Գորիս-Կապան ավտոմայրուղու՝ Որոտանի կիրճ իջնող հատվածի սկզբնամասից թեքվեց դեպի հարավ-արեւելք:

Առաջին կանգառը Դաութլու գյուղն էր, որ հիմա կոչվում է Դողար եւ մտնում է Արցախի Հանրապետության Քաշաթաղի վարչական շրջանի մեջ (մինչեւ Արցախյան պատերազմ՝ Կուբաթլիի շրջանի գյուղերից էր):

Դողարում նախ հյուրընկալվեցինք Գագիկ Խաչատրյանի այգում:

Գորիս քաղաքի այդ բնակիչը եկել եւ Դողարում՝ Վարարակն գետի ափին, հեքիաթային մի այգի է հիմնել:

Մենք ճաշակեցինք նուռ, խաղող, թուզ, արքայախնձոր, որ անզուգական համ ունեին:

Այնուհետեւ հյուրընկալվեցինք Դողարի մեկ այլ օջախում՝ Արտուշ Հակոբջանյանի եւ Սուսաննա Ջավադյանի հարկի տակ, որտեղ եղել էինք նաեւ ամիսներ առաջ՝ Լալազարի կամուրջ կատարած այցի ժամանակ:

Նրանց որդին՝ Նարեկ Հակոբջանյանը, մեզ պետք է ուղեկցեր Բղենո բերդ գնալիս:

Առաջ անցնելով նշենք՝ Նարեկը մի քաջ երիտասարդ է, որ տեղյակ է այդ կողմերի բոլոր կածաններին, ճանապարհներին, պատմամշակութային հուշարձաններին:

Պիտի հպարտանալ, որ մեր ամենահեռավոր եւ լեռնային գյուղերում այդպիսի երիտասարդներ կան՝ իրենց ընտանիքներով:

Նման երիտասարդներով են ամուր սահմանային մեր գյուղերը:

Մեր արշավախումբը Դողարից իջավ Լալազարի կամուրջ, ապա՝ կամուրջն անցնելուց հետո, գնացինք դեպի Որոտան ավան (երբեմնի Կուբաթլի) ձգվող ճանապարհով ու թեքվեցինք աջ՝ արեւմուտք:

Ճանապարհին Նարեկը ցույց էր տալիս խրամատներ, դիրքեր, որտեղ տարիներ առաջ՝ Արցախյան պատերազմի օրերին, ճակատամարտեր են տեղի ունեցել, որտեղ Գորիսի ինքնապաշտպանական ջոկատի տղաները հերոսական մարտեր են մղել եւ Սյունյաց աշխարհի պատմական ու հնամենի այդ տարածքից դուրս մղել թուրք-ազերիներին:

Նարեկը գիտի նաեւ ականապատված տարածքները եւ մեզ առաջնորդում էր անվտանգ կածաններով:

Մեր երկու մեքենան թողեցինք Բղենո բերդի ստորոտում:

Բղենո բերդը, ինչպես նշում է պատմիչը, **«անհասանելի է մարդկանց մուտքին, եւ միայն Տերը կարող է մատչելի դարձնել»**:

Դա հատկապես վերաբերում է բերդի հարավային, հարավ-արեւելյան, արեւմտյան, հյուսիսային մասերին, որոնք, իսկապես, աստվածաստեղծ պարիսպներով են շրջափակված:

Գագաթ տանող միակ կածանը ձգվում է բերդի հյուսիս-արեւելյան մասով:

Այդ ուղղությամբ էլ առաջ շարժվեցինք...

Զարմանալի ամրոց է Բղենո բերդը:

Եվ մի շարք առումով՝ բացառիկ:

Բանաստեղծ, որ գալիս է լեռներից ...

Բանաստեղծ, ՀԳՄ Վայոց Ձորի բաժանմունքի ղեկավար Վարդգես Խանոյանի ծննդյան 70 ամյակի առթիվ

Ես լեռներից եմ գալիս,
մանկությանս ձայնն եմ՝
լեռան աղբյուրի պես ողողանքող ...
Ես լեռներից եմ գալիս՝
նախահայրերիս ձայներն
իմ երակներում.
առասպելվող դարերը
կոպերիս վրա...

Այսպես նա ազդարարեց իր մուտքը գրական աշխարհ, թեեւ բարձրահունչ, բայց ազնիվ ու անկեղծ ելեւէջներով: Իր ներշնչանքի ակունքը հայրենի բնաշխարհն էր գեղահրաշ Վայոց ձորով, լեռնահովտում ծաղկած Շատին ծննդավայրով, որտեղ հյուսած մանկության ու պատանեկության երազներով թեւավորված վերջնականապես հանգրվանեց Ջերմուկ ոստանում: Եվ շարունակվեց կյանքի ճանապարհը, որ գրական-ստեղծագործական հետագիծ ունի, նույնքան եւ ավելի շուրջ կեսդարյա աշխատանքային գործունեություն հայրենի քաղաքի առողջարարական համակարգում՝ վաստակելով համընդհանուր հարգանք ու ճանաչում: «Մեր բանաստեղծն է», – հետաքրքրվելիս՝ նրա մասին սիրով կարձագանքեն վայոցձորցիները: Եվ Վարդգես Խանոյանը՝ մեր նորօրյա գրականության այդ համեստ աշխատավորը (եթե կարելի է այդպես ասել), արդեն քանի՛ տասնամյակ, առանց թմբուկ-շեփորային ծնծղաների, բացել է ստեղծագործական մի փոքրիկ կածան, որ, այո՛, սկիզբ է առել հայրենի բնաշխարհից, շարունակվել-զորացել Վայոց ձորի լեռ-քարափների զգացողական տարերքո, Արփա գետի քնարական շշուններով Ջերմուկի հեքիաթային ջրվեժի արեւաձայն ցոլքերով: Հենց այս գույներից էլ ծնվել է իր առաջին՝ «Արեւի ձայն» բանաստեղծական ժողովածուն, ինչ-որ տեղ սահյանական բնակերտ աշխարհի ազդեցության նշաններով, բայց եւ ինքնուրույն ճանապարհով քայլելու հայտարարագրումով: Էականն այն բնաբուխ միջուկ-տարերքն էր, որ վայոցձորյան տաք արեւի շողերով էր պարուրում ընթերցողի հոգին: Հետո ծնվեց «Հրաշալի քաղաքացին» պոեմը իր հայրենի ոստանը շենացնող , արարող մարդու մասին, ով ոչ միայն պահպանու, այլեւ ամենօրյա հոգածությամբ հարստացնում-բազմապատկում է բնաշխարհի գեղեցկությունը: Գիրքը ժամանակին լայն արձագանք գտավ հատկապես Վայոց Ձորի դպրոցների սաների շրջանում, հաստատելով այն ճշմարտությունը, որ իսկական գրականությունը ճանաչողական-դաստիարակչական մնայուն հետագիծ պետք է թողնի սերունդների ճանապարհին: Եվ ինքն էլ խոստովանում է. «Երեխաների հետ հանդիպումների ժամանակ զգացի, որ նրանք մանկական լավ գրքերի կարիք ունեն: Այդպես սկսեցի բանաստեղծություններ գրել նաեւ նրանց մասին նրանց համար»: Փոքրիկների հոգեբանությանն ու մտածողությանը համահունչ զգացումների ծնունդ է Խանոյանի «Արեւի ճանապարհով՛» գիրքը, որում ամփոփված գողտրիկ երգերը երեխաներին տոգորում են հայրենի բնաշխարհի հանդեպ ջերմ սիրով, ապրելիք կյանքի ճանապարհին բարի ու լուսավոր հետագիծ թողնելու, մարդկային մնայուն արժեքներով առաջնորդվելու զգացումներով: Եվ այդ ամենը՝ պարզ, դյուրամատչելի ոճական հյուսվածքով, պատկերավոր, զվարթ տարերքով:

Մանկապատանեկան աշխարհին էր, ըստ էության, նաեւ հասցեագրված Խանոյանի հերթական գիրքը՝ «Քաջերը մահ չունեն» գեղարվեստա-վավերապատումների ժողովածուն Արցախյան ազատամարտում հերոսաբար զոհված ջերմուկցիների սխրանքների մասին : Հիմա այդ գիրքը նույպես ուսուցչի հետ դպրոց է «մտնում» ՝ երեխաներին ավանդելու հայրենասիրության ու հերոսության դասեր:

Եվ վերջապես՝ կրկին «վերադարձ՛» բանաստեղծական արարումների աշխարհ՝ «Թախծի ծառ» խորհրդավոր խորագիրը կրող ժողովածուով: Նրանում ներառված բանաստեղծությունների գլխավոր «հերոսը» նույն անկեղծ ու անանց սերն է՝ հայրենի բնաշխարհը՝ իր անկրկնելի գույներով ու ձայներով, նաեւ՝ հոգին պարուրած ալեբախությունների, ժամանակի տագնապների, նորօրյա մարդու ցավերի ու նաեւ՝ անլքելի հույսի ու հավատի պատկերախոս անդրադարձներով: Եվ այս ամենի հետ ու այս ամենի մեջ «թախծի ծառ»՝ գրքի համանուն «հերոսը», այն իրական, լեգենդար ծառը, որ վշտահար խոնարհվել է Ջերմուկի անդնդախոր ձորի ժայռապռնկին. Լեգենդ չէ ի՞նչ է. դարերի պատմություն է՝ իբրեւ թե ծառին փարված մեկ ուրիշին է եղել, կայծակը դաժանորեն հարվածել , ճյուղակոտոր է արել: Եվ ահա Աստծու ամեն օր վշտահար ու մենակյաց «թախծի ծառը» սգում է իր «ընկերուհու» կորուստը ՝ տերեւներում պահած վաղորդյան արցունքը ցողելով Արփայի ջրերում: Եվ բանաստեղծն այսպես է վերահիմաստավորել հավերժական սիրո առեղծվածը.

Թախծի իմ ծառ,
քեզ քանի՞ միլիոն տարի է պետք,
որ քո ավավոցը դառնա բառ,
կեղեւդ դառնա մաշկագույն,
տերեւներդ դառնան հարդարված մազեր,
ոստերդ դառնան ոսկրե մատներ,
արմատներդ ոտնաթաթեր դառնան.
հայացքդ լցվի թախծի լույսով,

եւ դու ելնես , գնաս քո սիրո երեւից.
Քեզ քանի՞ միլիոն տարի է պետք ,
Թախծի իմ ծառ...

Խնկարկում հայրենի բնաշխարհին, բայց ամենից ավել՝ ցավազգացություն ու սեր այդ բնաշխարհում ապրող, արարող նաեւ կյանքի բավիղներում այդպես էլ իր տեղը չգտած, շրջապատից մեկուսացած-արհամարված մարդու հանդեպ: Մարդկային խոր ողբերգության, հեգեխռով զգացումների ինչպիսի՝ վառ դրսեվորում է: Պոեմի արժեք ունեցող «Մուրոյի մասին ցավալի մի հուշ» քնարապատումը՝ աշխարհում միայնակ ու խենթ մի մարդու մասին, որ կյանքում ոչինչ չունի, մոռացված է բոլորի կողմից, ու երբ հեռանում է կյանքից, մարդիկ նոր են հիշում նրան ու գերեզմանի շիրմատախտակին գրում «Էսքանն իմն է»: Չէ, Մուրոն գիժ չէր ու լավ գիտեր, որ «աշխարհում ինչ էլ լինի, էդքան հող, մեկ է, կհասնի իրեն»: Ասք չէ, ի՞նչ է...

Եվ, այնուամենայնիվ, «Թախծի ծառի» ճյուղերից «կախված» ամեն մի կանաչ տերեւ-երգից նաեւ լույս է ճառագում, կարոտ ու հավատ, ապրելու, արարելու, այս արեւի տակ իր տեղը գտնելու, հաստատելու հույս: Լույս՝ ի հակադիր կյանքում ու մարդկանց հոգիներում անթեղված ցավի, սեր՝ աշխարհում միակ երազային էակի հանդեպ, անսահման սեր՝ հայրենի բնաշխարհի ու նրան իր սրտում փայփայող վայոցձորցի շինականի հանդեպ, կարոտ՝ լավի ու բարու...

Ու եթե առանձին բանաստեղծություններում հենց թախծի մրմունջներ էլ են հնչում , ապա միայն մեր կյանքում, մարդու՛ կյանքում լավի ու բարու, սիրո ու հավատի պակասից: Ժողովածուի խոհափիլիսոփայական տարերքի զարկերակները հենց այս խորհրդանիշներով են բաբախում:

Վկա նաեւ գրքի բաժինների խորագրերը՝ «Սիրո ճյուղեր», «Հայրենի արմատներ», «Ծաղիկ ու պտուղ», «Թախծի ծառին իջած թռչուններ»...

Վարդգես Խանոյանի ստեղծագործական դիմանկարի միայն մի քանի նրբագիծ ներկայացնող սույն հոդվածով փորձեցի նաեւ ինչ-որ չափով քավել իմ եւ գրականագետ գործընկերներիս «մեղքը», որ ոչ միշտ ենք մեր հայացքը սեւեռում մայրաքաղաքից դուրս՝ մարզերում ապրող գրողների աշխարհին : Իմ նպատակը համեստ էր՝ պարզապես հոբելյանական առիթն օգտագործելով՝ ընթերցողներին հրավիրել հեռավոր Ջերմուկում ապրող-ստեղծագործող բանաստեղծի աշխարհ, համոզված, որ նրա «Թախծի ծառը» լուսավոր, բարի հետագիծ կթողնի նրանց հոգում: Այս զգացումներով շնորհավորում եմ «լեռներից եկող» բանաստեղծի ծննդյան հոբելյանը եւ արդեն հրատարակության պատրաստ նոր գրքերի սպասումով ստորագրում՝

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Մեր տեսած բերդերից միակն է, որ ունեցել է պաշտպանական մի քանի գոտի, ավելի ստույգ՝ երեք գոտի:

Առաջին գոտու հետքերը պարզ երեւում են եւ առանձնապես դժվարություն չներկայացրեցին հաղթահարելու համար:

Պաշտպանական երկրորդ գոտին անցնելու համար պետք է անցնեինք միակ մուտքով, որի պատերի մի մասը դեռ պահպանվում է:

Ըստ Նարեկի՝ բերդն ունի նաեւ գաղտնի մուտք, որ հիմա մացառներով պատված է, եւ դժվար կլինի հաղթահարել:

Առհասարակ բերդն ունեցել է բազմաթիվ գաղտնուղիներ, որոնց միջոցով ամրոցի պաշտպանները (պաշարումների ժամանակ) ջուր են վերցրել ստորոտում հոսող Որոտան գետից:

Ինչեւ է, պաշտպանական երկրոդ գոտու դարպասով մենք մտանք բերդի տարածք:

Պարիսպների հետքեր, քարանձավներ, դիտակետեր, խեցեղենի մնացորդներ...

Բերդի ներսում տեղաշարժվելու եւ հատկապես վեր բարձրանալու համար զգուշություն էր պահանջվում եւ ջանքեր:

Ամենագագաթում, պարզվում է, միջնաբերդն է՝ շրջափակված պաշտպանական մեկ այլ շերտով, որի պատերի հաստությունը տեղ-տեղ հասնում է 2-3 մետրի:

Ճարտարապետական ինչպիսի՜ հնարամտություն եւ վարպետություն:

Մեզ չհաջողվեց այդ պարսպից որեւէ բեկոր պոկել, այն էլ՝ կառուցումից հազարամյակներ անց:

Օրն արդեն ավարտին էր մոտենում:

Եվ ստիպված դադարեցրինք առաջխաղացումը՝ չմտնելով միջնաբերդի տարածք՝ թողնելով դա մեկ այլ արշավային այցի համար:

◈ ◈ ◈

Վերադարձին կրկին հյուրընկալվեցիք Արտուշ Հակոբջանյանի եւ Սուսաննա Ջավադյանի օջախում:

Այդտեղ հյուրընկալվել էինք նաեւ ս.թ. հունիս ամսին, երբ թթի բերքահավաք էր եւ թթից օղի թորելու ժամանակ, ինչը ներկայացրել էինք syuniacyerkir.am կայքով:

Իսկ հիմա... Արտուշ Հակոբջանյանն արդեն հասցրել էր խաղողի առատ բերքից գինի պատրաստել:

Եվ նրա հյուրընկալ ընտանիքի առաջարկին՝ ճաշակելու անմահական այդ գինին, մենք անզոր գտնվեցինք դիմադրել, մանավանդ որ Բղենո աստվածասկիզբ ամրոցում ստացած թարմ տպավորություններից դեռ չէինք կարողանում ազատվել:

◈ ◈ ◈

Վերադարձից հետո քրքրեցինք պատմության էջերը՝ Բղենո բերդին առնչվող նյութեր գտնելու համար:

Պարզվում է՝ այդ բերդ-ամրոցի պարիսպների տակ քանիցս մեր նախնիները ջախջախել են Շապուհի, Հազկերտի, սելջուկների եւ օսմանցիների զորքերին:

Եվ, այդուհանդերձ, Չորթման անունով հայտնի ավազակապետ-ամիրային հաջողվել էր գրավել Բղենո բերդը, թալանել այն եւ բերդի իշխանին գերի վերցնել:

Միայն հարյուր տարի հետո է մեզ հաջողվել հետ վերցնել բերդը՝ շնորհիվ Զաքարե եւ Իվանե իշխանների:

Օրբելյանների իշխանության տարիներին էլ այս բերդի համար ճակատամարտեր են մղվել: Եվ Սմբատ Օրբելյան մեծ սյունեցին կարողացել է վերջնականապես (13-րդ դար) հրոսակներին հեռացնել այդ տարածքից:

◈ ◈ ◈

Ինչպես արդեն նշեցինք, այս բերդը հաճախ շփոթել են Գյավուրի բերդի հետ (նաեւ՝ Գյավուր կալասի):

Մեր արշավախումբն էլ, անկեղծ լինենք, այդ համոզմամբ էր ճանապարհ ընկել, բայց...

Պարզվեց իրականությունը՝ դա Բղենո բերդն է:

Միեւնույն ժամանակ հաջողվեց ճշտել Գյավուրի բերդի տեղը, որ խոսակցության առանձին նյութ է, որին նույնպես կանդրադառնանք:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ամանորի խոհեր ու մաղթանքներ



Մարտիրոս Սարյան

1966թ., հունվարի 1 Ամեն Նոր տարի, շատ նոր բարիքների հետ միասին, նոր խոսք է բերում, բայց ուժի մեջ թողնում մեր նախնիների ստեղծած դարերի փորձով ու սերունդների իմաստությամբ ստուգված խոսքերը: Հայ մարդը միշտ Նոր տարին դիմավորելիս գինու բաժակը առել է ձեռքը, շշնջացել է՝ խաղաղություն աշխարհին: Աշխարհում խաղաղությունը երեւի ամենից շատ հայ ժողովրդին է պետք եղել: Դարեր շարունակ Արեւելքի ու Արեւմուտքի բախման քառուղիներում ընկած Հայաստանն ասպատակվել է, ավերվել, բաժանվել հզորների միջեւ, բայց, երբ հայ ժողովուրդը խաղաղության կարձատեւ պահեր է ունեցել, ստեղծագործել է, կերտել արվեստի հրաշքներ, մարդկային մշակույթն ու քաղաքակրթությունը հարստացրել յուր հոգու գեղեցկություններով: Նա աշխարհին Խորենացի ու Շիրակացի է տվել, Զվարթնոց ու Աղթամար է կերտել, բարձրացրել միջնադարյան փառքերից մեկը՝ Անի մայրաքաղաքը, որն իրավամբ տիեզերական քաղաք է կոչվել: Այդպես է եղել դարերի ընթացքում, այդպես եղավ նաեւ մեր դարում, երբ հայ ժողովուրդն իրեն վիճակված մեծագույն ողբերգությունից հետո, բզկտված ու արյունաածոր, նորից ոտքի ելավ, հավատարիմ իր նախնիների ավանդին, սկսեց նորից քարեր դնել իր մշակույթի հին շենքին, զարգացնել իր գիտությունը, գրականությունը, արվեստը: Խաղաղություն աշխարհին եւ աշխարհի հետ՝ Հայաստանին, որ հայ ժողովրդի ընդերքում եղած ստեղծագործական հորդառատ ուժերը նոր հրաշքներ գործեն, որ էլ առավել ծաղկի Հայաստանը, իր գրկում հավաքի աշխարհով մեկ ցրված իր տարագիր զավակներին, որ հավետ ինչի քաղցր ու սրտաբուխ հայոց լեզուն: ■

Համո Սահյան

Եղեւնին

Անտառից եկած կանաչ եղեւնին
Հիշում է կանաչ իր ընկերներին:
Արահետներն է հիշում ձյունի տակ,
Հիշում է բացատն ու բուքն ապիտակ:
Երկինքն է հիշում իր գլխի վերեւ,
Եվ իր մայր անտառն ասեղնատերեւ:
Հովերն է հիշում նա գարնանային,
Որ իրեն այնպես օրորում էին:
Վաղորդյան ցողի գոհարն է հիշում
Եվ մայրամուտի թեւերն արբեշում:
Հիշում է սոսափն ամեն մի ծառի,
Խարույկն է հիշում անտառապահի:
Հիշում է բոլորն ու չի ափսոսում,
Որ էլ անտառի երգի չի լսում:
Ինչո՞ւ ափսոսա, երբ իր թեւերին
Գարուն է բերել երեխաներին,
Գարուն է բերել այս ձմռան օրով
Եվ դուն է մտել կանաչ շորերով:
Ե՞րբ է նա այսպես զուգվել, զարդարվել
Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել:
Ե՞րբ է նա եղել այսքան երջանիկ
Ու ե՞րբ է դեսեւ այսքան խաղալիք:
Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ
Երգել ու պարել մինչեւ ուշ գիշեր:
Զարդարանքներով, ասդղերով իր պերճ
Կանգնել է ուրախ մանուկների մեջ:
Այնպես հպարտ է նայում աշխարհին,
Կարծես հենց ինքն է բերել Նոր դարին:

2020 թվականը՝ մկան (առնետի) տարի

2020-ը ըստ արեւելյան օրացույցի մկան տարի է (ճապոնական օրացույցով՝ մկան, չինականով՝ առնետի տարի): Ըստ ճապոնական հավատալիքների՝ տասներկուամյա շրջափուլով ծնված մարդիկ համապատասխանաբար ունենում են նշված կենդանու գծերը: Իսկ ընդհանրապես թե որ տարում է ծնվել մարդը, ըստ այդմ կարելի է որոշել նրա բնավորությունը, ճանաչել նրա թույլ եւ ուժեղ կողմերը, կանխատեսել գալիքը: Ահավասիկ, մկան տարում (1936, 1948, 1960, 1972, 1984, 1996, 2008 թվականներին) ծնվածների բնութագիրն ըստ արեւելյան հավատալիքների:

Ճապոնական հավատալիքների համաձայն՝ մուկը հմայիչ է ուրիշների աչքում, բայց մանրուքների պատճառով իրար է անցնում: Առաջին հայացքից մուկը թվում է հանգիստ, հավասարակշռված եւ ուրախ: Մինչդեռ այդ զվարթության հետեւում թաքնված են ջղագրգռությունն ու անհանգստությունը: Մուկը զուսպ է եւ թաքցնում է իր հոգսերը: Որպես կանոն մուկն աչքի չի ընկնում խորագիտակությամբ, բայց նա ազնիվ է ու փառասեր, օժտված է սկսած գործը մինչեւ վերջ հասցնելու մեծ ընդունակությամբ: Նա սիրում է փողն իր վրա ծախսել: Ոչ մի բանից իրեն չզրկելով՝ աշխատում է փողը պարտք չտալ:

Մուկը սիրում է ընկերակցություն եւ հաճույքով բամբասում է: Նա ավելի շատ ծանոթներ ունի, քան իսկական բարեկամներ: Մկան տարում ծնված մարդկանց կյանքի առաջին փուլը բարեհաջող է լինում: Երկրորդ փուլում նրանք կարող են ամեն ինչ կորցնել կամ հապճեպ քայլի, կամ էլ, որ հաճախ է պատահում, բուռն, կործանարար սիրո պատճառով: Վերջին փուլում մկան կյանքը վերստին հիմնականում ընթանում է անխռով:

Մկան համար ավելի լավ է ամուսնանալ կապկի, վիշապի կամ գոմեշի հետ, քանի որ նրանք կազմում են կամ մեկմեկու լրացնող, կամ էլ մեկը մյուսին ներդաշնակող զույգ: Փոքր-ինչ վատ է շան, վարազի կամ օձի ընտրությունը: Նա պետք է խուսափի ձիուց, եւ բոլորովին վատ է, երբ այր մուկն ամուսնանում է մի կնոջ հետ, որը ծնվել է 60 տարին մեկ կրկնվող հրեղեն ձիու տարում: Ըստ ճապոնական հավատալիքի, հրեղեն ձիու տարում ծնված կնոջ հետ ամուսնացած տղամարդը մեռնում է բռնի մահով:

Ուշագրավ է, որ 20-րդ դարը սկսվել է մկան տարով:

Մկան տարում են ծնվել Վ. Շեքսպիրը, Պետրոս Առաջինը, Ժ. Վեռնը, Բոմարշեն, Ջ. Լոնդոնը. Ա. Էքզյուպերին, Լ. Տոլստոյը, Ա. Բեբելը, Ն. Չեռնիշեւսկին. Լ. Ֆոյերբախը, Պ. Պիսարեւը, Ն. Բուրդենկոն, Ն. Իսակովսկին, Ի. Յակուբովսկին, Ա. Տուպոլեւը, Մ. Գլինկան, Է. Զոլան, Հ. Գուդերիանը, Բ. Պաստեռնակը, Վ. Սոկոլովը, Պ. Սեւակը, Ղ. Աղայանը, Գ. Նժդեհը եւ ուրիշներ: ■

Բնապահպանական կրթություն Կապանի եւ Քաջարանի վեց դպրոցում

««Ծիածան» առաջնորդների կենտրոն» հասարակական կազմակերպության իրականացրած «Էկոկրթության իրականացում եւ էկոանկյունների հիմնում Կապան եւ Քաջարան համայնքների դպրոցներում» ծրագիրը հատեց վերջնագիծը:

Դեկտեմբերի 14-ին ծրագրի ամփոփմանը նվիրված միջոցառումն էր, որի շրջանակում նախ՝ մարզկենտրոնի Արամ Մանուկյան փողոցում հանդիսավոր պայմաններում բացվեց տեղեկատվական էկոկանգառ:

Այնուհետեւ Կապանի N3 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ ծրագրի ամփոփումը:

Ծրագիրը հովանավորել էր «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագիրը՝ գերմանական համագործակցության բանկի ֆինանսավորմամբ:

Կրթօջախի ձեմասրահում ցուցահանդես էր կազմակերպվել՝ Կապանի N5, Քաջարանի N1, Գեղիի, Լեռնաձորի, Շիկահողի, Ծավի դպրոցների մասնակցությամբ:

«Ծիածան» առաջնորդների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը հակիրճ ներկայացրեց ութ ամսվա կտրվածքով անցկացված միջոցառումները, երախտագիտություն հայտնեց Կապանի համայնքապետարանին, Սյունիքի մարզպետարանին՝ աջակցության համար: Մանավանդ էկոտեղեկատվական կանգառի իրականություն դարձավ համայնքապետարանի աջակցությամբ:

Իսկ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ ծրագրի ամփոփմանը նվիրված միջոցառում:

Ծրագրի համակարգող Լիլիթ Բաբայանը լուսանկարների եւ տեղեկատվական նյութերի միջոցով (դրանք ցուցադրվում էին մեծադիր էկրանին) ներկայացրեց հունիսից մինչեւ հիմա բնապահպանությանը միտված միջոցառումները:

Ծրագրի մասնակից վեց դպրոցների աշակերտները ներկայացրին բեմադրություններ եւ սյուժեներ՝ բնապահպանական թեմաներով:

Քաջարանի N1 դպրոցը բնապահպանական թեման ներկայացրեց էկոօրացույցի միջոցով, Շիկահողի դպրոցը ձեռնարկել էր էկոտեղեկատվական արահետը, N5 դպրոցը ներկայացրեց էկոկրթության եւ արվեստի առնչությունը, Գեղիի դպրոցի աշակերտները ներկայացրին «Իշխանը» բեմադրությունը, որում շոշափվում էին Սեւանա լճի բնապահպանական խնդիրը: Լեռնաձորի դպրոցի աշակերտների ներկայացրածը կոչվում էր «Դաս Բաղաց լեռներում», որտեղ գյուղի կոլորիտն ընդգծվում էր ժողովրդական բառ ու բանով: Ծավի դպրոցի աշակերտները հանդես եկան տատիկների կերպարով եւ զվարճացրին հանդիսականին:

Ծրագրի փորձագետ Հասմիկ Համբարձումյանը համոզմունք հայտնեց, որ ծրագրի մեջ ընդգրկված յուրաքանչյուր աշակերտ կատարել է իր ընտրությունը՝ նա էկոաշխարհի նվիրյալն է, շրջակա միջավայրը մաքուր պահելու երդվյալ կողմնակիցը:

«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի թիմի ղեկավար, դոկտոր Հայնո Հերթելը տպավորված էր ցուցահանդեսով եւ ներկայացումներով ու խոստովանեց. *«Չգիտեի, որ Սյունիքում այսքան շնորհալի երեխաներ կան»:*

Իսկ ամենավերջում ծրագրի կայացմանը նպաստած դպրոցների տնօրեններին եւ դպրոցականներին հանձնվեցին շնորհակալագրեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 25.12.2019թ.: